


Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

1182

№ 90

# ՈՒՐԲԻՆՈԵՑԻ ՄԱՆՈՒԿԸ

(Ոհման ՀՀ.Ք.Ա.Թ.ՆԵՐԻՑ)



Թիֆլիս

Տպարան: || Տիպոգ. Մ. Ռարաձև և Կ°.

1895

2011

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 90

189  
ԱՀ  
ԲՀ-51



## ՈՒՐԲԻՆՈԵՑԻ ՄԱՆՈՒԿԸ

1002  
32503

(որդեգիր համար առաջնայի օպոտուու),  
այս օրը

(ՈՒՐԲԻՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՒՑ)



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Շարաձե: || Տիզոգ. Մ. Ռարած և Կ°.

1895

38223

ԱՐԱՐԱՏԻ 1890 թ 49740

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Марта  
1895 года.

2003

21125-60

Q

առիջ ոչ հաջու ուսչ ունի ի վե ամելի  
առև այս ոչ նարուտ աշխի առնեխու ոչ  
նոր ոչ զանելու ոչ ենուց ոչ զանեխու ոչ  
արակ մնաց ոչ նամանաւու և նոր  
առ և զանելու գումար ոչ մեաց ոչ բայց  
արա ոչ զանելու գումար ոչ առաջ ոչ բայց  
(Ուղի հէքիաթներից)

**Պատահել է այս 1490 թուականին, Ուր-  
բինո քաղաքումը, Գուիդոբալդօի գքութեան  
ժամանակ:**

Յիշեալ տարին՝ մի գարնանային գեղեցիկ  
օր՝ վանդակապատ պատուհանից դէպի գուրս  
էր նալում մի փոքրիկ մանուկ։ Դա մի սի-  
րունիկ տղալ էր, թխաւուն աչքերով և շի-  
կաւուն մազերով՝ ճակատի կողմից խուզած։  
Նա հագած ունէր կարճ և կապտաւուն կա-  
րա, և ձեռքին բռնած նոյն գոյնի գլխարկ,  
ինչ գոյնի որ կաբան էր։

Չնայած որ շատ գեղեցիկ առաւօտ էր՝  
նրա փոքրիկ սրտիկը շատ տխուր էր, որով-  
հետեւ իր սիրելի ընկերը, որ իրանից տասը  
տարով մեծ էր՝ գնացել էր ուրիշ քաղաք, մի  
նշանաւոր նկարչի մօտ աշակերտութեան մըտ-  
նելու։ Այդ բարեկամը, որի անունն էր Տի-

մօթէօ Խէլ Վիտա՛ շատ սիրելի էր երեխա-  
յին, որովհետև միշտ խաղում էր նրա հետ,  
խաղալիկներ էր շնուռմ, հէքիաթներ էր պատ-  
մում և զուարճացնում էր: Ուրեմն ինչպէս  
կարող էր չքաշել իր ալդպիսի ընկերոջ և բա-  
րեկամի կարօտը: Սակայն ինքն իրան սիրտ  
տալու համար՝ ասում էր. հարկաւոր չէ նրա  
մասին շատ մտածել, չէ՞ որ նա ինքն ասաց,  
թէ «Ես մտնում եմ մի երեկո ոսկերչի մօտ,  
որ շատ էլ լաւ մարդ է, բայց մտադիր եմ  
նկարիչ դառնալ»: Եւ մանուկը հասկանում  
էր, որ նկարիչ դառնալը ամենամեծ և իմաս-  
տուն բանն է աշխարհիս վրայ. այս բանը  
շատ լաւ էր հասկանում, որովհետև նա՝ Ռա-  
փակէլն էր, Զիովանի Սանցիօի որդին:

Ուրբինում ոչ մի երեխայ չկար, որ  
Ռափակէլի չափ և նրա պէս բախտաւոր լի-  
նէր: Նա ունէր մի ամենաքաղցր պապիկ, ջերմ  
որդեսէր մալր և շատ փափկասիրտ հալր, որ  
նկարիչ լինելով՝ հրեշտակներ նկարելիս՝ Ռա-  
փակէլի պատկերն էլ նրանց մէջն էր ձգում:

Որդուն պատմելու համար հալրը հե-  
տաքրքիչ պատմութիւնների մեծ պաշար ու-  
նէր: Նրանցից ո՞րը լիքն էր լինում հարուստ  
երեակալութիւնով, ո՞րն էլ գիտնական բա-  
ներով, բայց ամենն էլ այնպիսի սէր էին

գարթեցնում դէպի գեղարուեստը, որ երեխան  
ակամալ պարապում էր դրանցով, ծծում ու  
ներս էր շնչում ինչպէս շնչում էր ծաղկ-  
ների անուշ հոտը, երբ մօտեցնում էր ոռւնգ-  
ներին:

Կեանքն այն ժամանակ շատ լաւ էր վա-  
ղեմի Ուրբինօ քաղաքում, թէև այն ժամա-  
նակ նա ալնքան մեծացած և ծաղկած չէր,  
ինչպէս յետոյ: Լաւ էր նրանով, որ շատ  
պարզ էր և հասարակ. տիրում էր խաղա-  
ղութիւն և անդորրութիւն. քաջառողջ ձեռ-  
քերը միացած էին քաջասիրտ ալրականու-  
թեան հետ: Քաղաքացոց և տիրող իշխանի  
մէջ կատարեալ համերաշնութիւն և համա-  
ձայնութիւն կար: Ֆողովուրդը գիտէր, որ մի  
որևէից թիւրիմացութիւն պարգելու համար  
կարող էին ուղղակի գնալ իշխանի պալատը,  
կամ շուկալով անցնելիս կանգնեցնել նրան,  
ասել ինչ որ ուզում էին և ստանալ իրանց  
ցանկացած խորհուրդը: Քաղաքացոց սիրտը  
լիքն էր ամենաբարի ձգտումներով. ջերմ սէր  
ունէին դէպի գեղեցիկը, զգում էին իրանց  
համայնական պարտքը և կատարում, մտեր-  
մութիւն ունէին իրար մէջ և հաւատարմու-  
թիւն, շիտակութիւնն ընդհանուր էր, և այս  
պատճառով էլ ամենքն էլ բաւական էին

իրանց ունեցածովը, ամենքն էլ հարուստ է-  
ին և բախտաւոր: Բոլոր գործերը կատարւում  
էին բարեխղճութեամբ, զրկողութիւն չկար,  
կեցութիւններն էժան էր, ուտեստը լաւ և  
առատ, աւելի լաւ և առատ, քան թէ հի-  
մա է: Վաղեմի գեղեցիկ շինութիւնների տ-  
մեն մի քարը շատ հաստատուն էր, ամեն մի  
զարդի մէջ երկում էր շինողի գեղեցիկ ճա-  
շակը: Մարդիկ իրանց ընկը շինում էին, որ  
և' իրանք ապրեն նրանում, և' իրանց որդի-  
քը և' իրանց որդոց որդիքը: Նրանք էլ իրանց  
առանձին մտորումներն ունէին, իրանց աւան-  
դութիւնները, և ալդ բոլորը դրոշմում էին  
իրանց ամեն մի շինուածքի վրայ, նոյն իսկ  
պատուհանների երկաթէ ձուղացանցի՝ և դըռ-  
ների քանդակների վրայ: Վեր էին կենում  
առաւօտուայ զանգակի ձայնի հետ և աշխա-  
տում մինչև երեկոյի զանգակը, և յետոյ տաք  
երեկոներին դուրս էին գալիս փողոցը և ի-  
րանց դռներին նստելով՝ մտիկ էին տալիս ի-  
րանց առջեր, քաղաքի ստորոտում ընկած հո-  
վիտներին, որոնք ծածկուած էին առատ ար-  
տերով, մարգագետիններով, մրգալից այգի-  
ներով և ստուերախիտ անտառներով: Նրանք  
զբոյց էին անում և խնդում, ծիծաղում մի-  
մեանց հետ, գոհ լինելով իրանց հաճելի և

*W*  
օգտակար կեանքից, առանց նախանձելու դւ-  
րիշն, առանց փափագելու ապրել ուրիշի  
կեանքով, որպիսով շատ մարդիկ փչացնում  
են իրանց կեանքը:

Այս, մեր ասած ժամանակ առ հասարակ  
կեանքը լաւ էր շատ տեղ, բայց Ուրբինում  
աւելի լաւ էր, քան թէ մեր ժամանակ  
որևէ տեղ:

Կարող էք արգեօք ձեր երեակալութեան  
մէջ պատկերացնել բարեհոգի և խելօք Զիովանի  
Սանցիօին, երբ որ նա մի սուրբ տօն օրուայ  
երեկոյին նստած իր ծերունի հօր կողքին, իսկ  
փոքրիկ որդեակը նրանց առջև վազվելիս  
Արդէն բուկս ձայնով զողանջում են եկեղեցու  
զանգակները, որոնք տատանւում են նրանց  
գլխավերելը, և արևի վերջին ճառագայթներն  
ընկել են նախշուն պատերի, քարաշէն մարտ-  
կոցների և քաղաքալին դրօշակի վրայ, որ ծա-  
ծանւում է դղեակի տանիքի ծայրին, բալի և  
տանձի ծառերով ծածկուած գահավէժ ժայ-  
ռերի վրայ, որոնց գլխին շինուած է քաղա-  
քը: Ես կարող եմ այս բոլորը պատկերացնել  
ինձ: Երբ որ աչքերս խփեմ՝ Ուրբինօն կը կեն-  
դանանայ իմ լիշողութեան մէջ բոլորովին այն-  
պէս, ինչպէս որ ես տեսել եմ նրան: Ի՞նչ  
պէս կուզենալի ես ապրել ալդ լեռնալին վայ-

ըերում և հանդիպել այնտեղ Ռափայէլին՝ այդ սքանչելի երեխային այն ժամանակ, երբ որ նա գնում էր իր ճամպովը, բախտաւոր և ուրախ, և իր մանկական հոգու մէջ տպաւորում էր անգիտակցաբար բոլոր այդ հրաշտի տեսարանները, և կեանքի բոլոր երևոյթները, որոնցով շրջապատուած էր, և տպաւորում էր նրա համար, որ հասակ առած ժամանակ այդ բոլորը հազարդէ աշխարհին:

—Մի խանգարէք երեխային. կը գալ ժամանակ, երբ նա այդ բոլորը կը գըտ ներկերով, ասում էր շատ անգամ նրա խելօք հայրը, որ սիրում էր մտածել, թէ իր վրձինը և ներկերը երբ և իցէ կանցնեն Ռափայէլին, որի ձեռքը աւելի տաղանդով և ուժով կը տիրէ վրձինին, քան տիրել էր իր սեփական ձեռքը:

Արդեօք մտածում էր այդ երեխան, թէ երբ և իցէ նկարիչ պիտի դառնայ ինքը՝ թէ ոչ, բայց նա ամբողջ ժամերով չէր դադարում բերկրիլ իր տեսածներով և ուշի ուշով զննել բոլոր առարկաների տեսքն ու կերպարանքը, թէ ծաղկազարդ դաշտերում և թէ տերեախիտ ծառաստաններում:

Եւ իրաւի՝ այդ ժամանակ Ուրբինում տեսնելու արժանի և նկարչական երևոյթներ

շատ կալին, մանաւանդ երբ մարդնայէր դէպի ցած, դէպի քաղաքի ոտքի տակ ընկած հովիտները: Մերթ երեսում էին նիզակների շարքեր— զինաւորուած ալրուձին էր գնում ծառերի միջով. մերթ գիւղացոց սայլերի երկար կարաւանն էր գալիս դէպի քաղաք՝ բեռնաւորուած դաշտերի և պարտէզների արդիւնքով. կամ պատահաբար գալիս էր կարդինալը սպիտակ ջորու վրայ նստած, կարմիր վերարկուող. իսկ նրա ետևից մի քանի բեռնակիր ձիաներ, ոսկի և արծաթի անօթներով և ուրիշ զանազան բաներով: Պատահում էր տեսնել և որսորդների արշաւանքը: Որսորդները ձիաւորուած, մեծ գուքսն էլ իրանց առջեւը, դուրս էին գալիս որսի, գեղեցիկ շներով, որոնք ձգտում էին կապերից գուրս պրծնիլ, և փըչում էին որսական փողերը կանաչ դաշտերում: Երբեմն անցնում էին վարձկան զօրքերի գունդեր՝ սպառազինուած փալլուն զրահներով, գրօշակները փոփոացնելով. կամ միախակեցների և ուխտաւորների խմբեր, երգելով սըրբացան օրհներգութիւններ, ինչ որ երգել էին երուսաղէմում, և իրանց ծանր հողաթափներով ոտնատակ էին տալիս արդէն բաւական բարձրացած կանաչ խոտը, դանդաղարժ քայլերով մօտենում էին քաղաքին և բարձ-

ըանում քայրաժայռերի գագաթը։ Միթէ դուք չէիք ցանկանալ կանգնել Ուափայէլի կողքին և նրա պատուհանից նայել Ուրբինօի շըր ջակարքին, ինչպէս որ նա կար նոյն ժամանակ։

Ի՞նչ կասկած, որ Ուրբինօի բարի բնակիչները շատ անգամ ծիծաղում էին Ուափայէլի վրայ, ինչպէս մի փոքրիկ ցնորսղի, որ նա ամբողջ ժամերով կանգնում էր և նայում, նայում, միայն նայում էր այնպէս, ինչպէս իրաւունք ունեն նայելու միայն այն աչքերը, որոնք լաւ են տեսնում, և տեսնում են բոլորին ոչ այնպէս, ինչպէս ուրիշի աչքերը։

Ուափայէլի բախտիցը՝ նրա մանկութեան օրերը խաղաղութեան օրեր էին. այնպէս չէր, ինչպէս նրա հօր մանկութեան ժամանակ, երբ շարունակ հրձգութիւններ էին լինում և անթիւ տներ մատնում հրդեհի ալիքներին, հրդեհներ՝ որոնք ամենայն ինչ լափում էին, ինչ որ իրանց առաջն էր ընկնում։

Այս ժամանակ Ուրբինօ քաղաքի անունն սկսել էր բարձրանալ իր Փարփորեղէններով։ Այնտեղ շինուած ահազին պնակները և թասերը, հարսանեկան ափսէնները, գեղատընալին սրուակները արդէն սկսել էին մրցել զուբիօ քաղաքում շինուածների հետ։ Երբ

որ դուքսը կամենում էր մէկին ինչ և իցէ առիթով մի ընծալ ուզարկել՝ նա միշտ էր սիրած Ուրբինօ քաղաքի շինուածներից էր առնում։ Սակայն Փարփոր շինելու վարպետութիւնը գեռ չէր հասել այն աստիճանի կատարելութեան, որին հասած էին միւս արուեստները։ Երբ որ դուք կը մեծանաք՝ այն ժամանակ արդէն կիմանաք, որ նախնի լոյները և քրիստոնեաները ինչ գեղեցիկ բաներ որ ունէին բոլորն էլ մեռել էին, նրանց հետ մեռել էին և վարպետները և նկարիչները, կամ ասենք քնել էին մի քանի տարով։ Միևնույն ժամանակ եկեղեցու գինուորները և իշխանները, ազնուականները և վարձկանները հարստահարում էին երկիրը, միմեանց ձեռքից լափշտակում, և այդ բոլորն անում էին ի հարկէ կրակով, սըրով և կողոպտելով։ Յետոլ, երբ որ չարաբաստիկ աղէտների ժամանակներն անցան՝ վարպետները և նկարիչները նորից կենդանացան միւս արհեստագէտների հետ։ Նատ քաղաքներում հանգած հնոցները կրկին վառուեցին և արուեստներն սկսեցին նորինորոյ ծաղկել։ Երբ որ Ուրբինօում արդէն շինում էին այլ և այլ տեսակ Փարփորեղէն անօթներ՝ այդ ժամանակ Ուափայէլը գեռ վազվը զում էր իր մանկական տոտիկներով։

Այդ ժամանակ Ուրբինօում մեծ անուն  
էր հանել Բենեդէթտօ Ռոնկոնի վարպետն իր  
Փարֆորի արհեստանոցով։ Նրա տունը՝ հե-  
ռու չէր Ուափալէլի հօր տնից։ Նա մի պատ-  
կառելի մարդ էր, միջին հասակից նոր ան-  
ցած, ալէխառն մօրուքով, գեղեցկադէմ, բայց  
փոքր ինչ խիստ նայուածքով։ Նա ունէր մի  
շատ գեղեցիկ աղջիկ՝ անունը Պաշիթիկա։ Բե-  
նեդէթտօն շատ էր սիրում իր աղջկանը, բայց  
ոչ այնքան շատ, ինչքան սիրում էր իր ա-  
րուեստի արտադրութիւնները—Հարսանեկան  
խոր ու կլոր ափսէները, ձուաձև, ահագին  
պնակները, որոնց վրայ նկարում էր նա Ս.ս-  
տուածաշնչից առնուած պատկերներ, բնու-  
թեան տեսարաններ և այլ մտացածին բա-  
ներ։ Այդ բոլորը նկարելուց յետոյ՝ անօթները  
ձգում էր հնոցը և սրտատրով սպասում էր,  
թէ ինչպէս դուրս կդան կրակից։ Եատ ան-  
գամ դուրս էին գալիս վնասուած, ճաքճքուած  
և բիծերով, իսկ շատ անգամ էլ ամբողջ և  
անվնաս։ և այդ ժամանակ նրա ուրախու-  
թեանն էլ չափ չէր լինում։

Բենեդէթտօն պատուասէր և սնափառ  
մարդ էր։ Նա բաւական հարուստ էր, և մեծ  
հոչակ ունէր իբրև լաւ նկարիչ։ բայց զու-  
բիում կենում էր մի երիտասարդ նկարիչ

Զիօրջիօ անունով։ սա իր տաղանգով գերա-  
զանցում էր Բենեդէթտօին, որ այդ պատճա-  
ռով կարծես վշերի վրայ էր քնում, որովհե-  
տեւ նախանձը քնի հետ հաշտ չի լինում։

Բենեդէթտօի տունը մի բաւական եր-  
կար շինութիւն էր՝ քար ու կրից շինած։ Նա  
ունէր ընդարձակ բակ, որի ետևում վարդի  
թուփեր կային տնկոտած, իսկ տան պատու-  
հանները նայում էին գէպի այգին, որի մեծ  
մասը բանջարանոց էր, և որի մէջ հասնում  
էին շատ տեսակ տանձեր, սալորներ և վայրի  
ելակ։ Բենեդէթտօի գործանոցի պատուհաննե-  
րի առջև բացւում էր այսպիսի գալարագեղ  
տեսարան։ Ուրբինօում շատ կային այն ժա-  
մանակ այսպիսի բանուորական սենեակներ,  
գուրեկան, խաղաղ, ընդարձակ, խոտերի և  
ծաղկների անուշահոտութեամբ լցուած։ Իսկ  
մեր ժամանակ մարդիկ բանում են բազմա-  
մարդ և հոտած քաղաքներում, նեղ և խեղ-  
դող գործարաններում, և իրանց գործն էլ  
նոյնպէս չոր է լինում և տիսուր, ինչպէս որ  
իրանց կեանքն է։

Հարևան Սանցիօի փոքրիկ տղան յաճախ  
վազվզում էր Բենեդէթտօի պարտէզումը, լաւ  
իմանալով, որ Պաշիթիկայի համար մեծ ու-

րախութիւն էր տեսնել նրան իրանց մօտ, և նոյն իսկ խստադէմ նկարիչը ուրախ ժպտում էր նրան տեսնելիս, և շատ անգամ ցոյց էր տալիս, թէ ներկն ինչպէս պէտք է քսել դեռ փափուկ և չեփած կաւի վրայ: Պաշիֆիկան մի շատ քաղցր և բարի աղջիկ էր տասնըթոթը տարեկան, և շատ կարելի է որ Ռափառէլը՝ շատ տարի յետոյ՝ նրա դէմքն էր յիշել իր Սիկստինալի Աստուածամօր պատկերը նըկարելիս:

Ռափառէլը սիրում էր Պաշիֆիկալին այնպէս, ինչպէս սիրում էր ամեն մի բարի մարդու: Բենեդէթտօի տունը նա աւելի էր սիրում, քան թէ իր հօր սիրած զործանոցը և քան թէ իր սիրելի, ծերունի պապիկի ուրախ խանութը:

Բենեդէթտօն պահում էր չորս աշակերտ կամ որդեգիր, բայց դրանցից միայն մէկն էր Ռափառէլի և Պաշիֆիկալի սիրելին: Դա էր Լուկա Թորէլի անունով մի պատանի: Նա ծնուած էր մի լեռնալին փոքրիկ գիւղում և ֆիզիքապէս այնպէս էր կազմակերպուած, որ նրան աւելի յարմար կը գար զինակիր լինել, քան թէ նկարիչ: Ինքը թխադէմ, վայելչակազմ, երկայնահասակ, լայն թիկունքով, վըստահ շարժմունքով և լուրջ կերպարանքով:

Լինելով մի և նոյն ժամանակ առոյգ, ուժեղ և ճարպիկ՝ կարծես ծնուած էր աւելի քաջամարտիկ զինուոր լինելու, քան թէ դազգահու վրձին բանեցնելու համար: Բայց Լուկան մի տօն օր եկել էր Ուրբինօ, տեսել էր Պաշիֆիկալին, և նրա սէրը նետի պէս ցցուել էր սրտումը: Նա մտաւ նրա հօր մօտ աշակերտութեան միայն նրա համար, որ Պաշիֆիկալի հետ մի յարկի տակ ապրի: Սակայն դրանից մեծ օգուտ չունեցաւ: Պաշիֆիկալին նա տեսնում էր ճաշելիս, զուր էր կրում նրա համար ջրհորից, կերակրում էր նրա աղաւնիներին, լսում էր նրա իլկի բզզոցը թել մանելիս և զութակի մեղմ ձախնը: Ի՞նչպէս երանի էր տալիս Ռափառէլին, որ նա միշտ Պաշիֆիկալի հետ էր լինում, նրա հետ ման էր գալիս, նրա հետ խօսում, խաղում և ուրախանում:

— Ես սիրում եմ Պաշիֆիկալին, —ասում էր Լուկան հառաչելով:

— Ես էլ եմ սիրում, —պատասխանում էր նրան Ռափառէլը ժպտալով:

— Բայց քո սէրն ու իմը մի և նոյն չե՞ն ուզում եմ նրա հետ ամուսնանալ:

— Ես երբէք չեմ ամուսնանալ: Ես կը

նշանուեմ նկարչութեան հետ, ասում էր Ռաֆայէլը լրջօրէն։ Նա առանց դադրելու հետեւում էր հօրը, երբ որ սա նկարում էր սուրբերին, արմաւենու կանաչ ճղները ձեռքներին, կապոյտ կամ ոսկեգոյն ֆոնի վրայ։ Կամ հետեւում է Բենեդէթտօին, երբ նա միժագոյն կաւի վրայ թեաւոր հրեշտակներ էր նկարում, կամ մարդարէներ իրանց պատմուճաններում և ուրիշ սրբազն աւանդութիւններ։

Մէկ անգամ երբ որ Ռաֆայէլը իր սիրած պատուհանից նայում էր դէպի հեռուն և մտորում ով գիտէ ինչու մասին, Լուկան, որ այդ միջոցին նրա կողքին նստած էր, այնպիսի մի խոր հոգոց քաշեց, որ մանուկը զարթեց իր խոր ցնորքներից և հարցրեց.

— Իմ սիրելի Լուկա, ի՞նչ է պատահել քեզ. ինչու համար ես այդպէս ախ քաշում։

Օ՛, Փայէլլօ, պատասխանեց՝ Լուկան տըլիրութեամբ. ի՞նչ հրաշալի դէպի կայ Պաչիֆիկալի ձեռքն ստանալու, եթէ ես Զորջիօի տաղանդն ունենալի։ Ի՞նչքան բախտաւոր կը լինէի, եթէ բարեգութ Աստուածը ինձ տաղանդ լինէր տուած՝ փոխանակ մարմնական ուժի և պինդ մկանունքների, որ ունի ամեն մի վայրենի վարազ։ Ի՞նչիս է պէտք այդ ու-

ժը, քանի որ իմ սիրոյս առարկան ձեռք ըերելու համար ինձ տաղանդ է հարկաւոր։

— Բայց այս ի՞նչ դէպի է, — հարցրեց Ռաֆայէլը, — ոոր ի՞նչ ես իմացել Պաչիֆիկալի մասին։ Ես մի ժամ առաջ նրա մօտ էի, ու նա ինձ ոչինչ չասաց։

— Նա դեռ չգիտէ, թէ ի՞նչ է սպասում իրան։ Մենք այսօր առաւոտը նոր պատուէլը ստացանք դուքսից։ Նա ցանկանում է ունենալ մի պնակ կամ սափոր, որ վրան նկարած լինի Եսթերի պատմութիւնը։ Այդ պատուէրը պիտի կատարուի Երեք ամսուաց լնթացքում սկսած այսօրուանից։ Այդ բանը նա պիտի ընծայէ իր մի ազգականին։ Գնի մասին կարող չէ խօսք լինել, նա մէկի տեղ տասը կը վճարէ, միայն թէ վրայի կենդանագրութիւնը պէտք է այնքան լաւ լինի, որից լաւագոյնը հնարաւոր չը լինի սպասել։ Վարպետ Բենեդէթտօն երեխ առաջուց գիտէր, որ այդպիսի մի պատուէր էր ստանալու, որովհետեւ պատրաստել է մի քանի ձուաձեւ բլիւդներ և գեղեցիկ, հաստափոր սափորներ։ Ամեն մէկիս ուզում է մի մի բան տալ։ Իր աչքերը այլ կը չեն տեսնում և սաստիկ սրտնեղած է, որ չի կարող ինքն իր ձեռքով կատարել դուքսի պատուէրը։ Գլխաւորն այն է, որ ասում է

1007  
32503

աշկարա, թէ ում շինածին որ հաւանի դուքսը՝ ես նրան ինձ ընկեր կանեմ և աղջիկս էլ կը տամ նրան։ Նատերն ասում են, որ այդ խոստումը մի մի պատրուակ է, թէ նրա համար է այդպիսի մրցանակ նշանակել, որ ամենայն շանք գործ գնեն լաւ բան դուրս բերելու իր գործարանից։ Բայց ես լաւ եմ ճանաչում իննեղէթտօին։ Նա շիտակ մարդ է, և իր խոստմունքը կը կատարէ անպատճառ։ Դու հիմա կարող ես հասկանալ, իմ սիրելի Ֆալէլյօ, թէ ինչու եմ ես այսպէս տխուր։ Մամուլի վրայ և հնոցի մօտ՝ ես լաւ աշխատաւոր եմ։ Կաւը շաղախում և կաղապարում եմ բաւական լաւ, բայց ինչ որ կը վերաբերի նկարելուն, ես այդ գործումը խամ եմ, և միւս ընկերներս այդ բանում ինձ կը գերազանցեն, ես լաւ գիտեմ։

Ուափալէլլ լսում էր այդ բոլորը լուս և մունջ, արմունկներով թինկ տուած բարեկամի ծնկներին և ծնոտը դրած ափերի մէջ։ Նա գիտէր որ միւս աշակերտները աւելի լաւ էին նկարում քան իր սիրելի Լուկան, թէ և նրա չափ ոչ մէկը բարի չէր և ազնիւ, և ոչ մէկը նրա չափ գրաւած չէր Պաշիֆիկայի համակրանքը։

— Ինչպէս ասացի՞ր, որքան ժամանակ է

նշանակուած այդ պատուէրը կատարելու համար։

— Երեք ամիս, իմ սիրելիս, պատասխանեց Լուկան, առաջուանից էլ աւելի խոր հոգոց քաշելով։ Այո՛, երեք ամիս, բայց ինչ օգուտ։ Եթէ նշանակուած լինէր թէկուզ երեք տարի՝ ես դարձեալ չէի կարող ուրիշների հետ մրցել։ Գեղարուեստն այնպիսի բան չէ, որ ներս գցենք մեր ուզած մարդու մէջ։ Միւնոյն է, նշանակած ժամանակի վերջումն ևս դարձեալ նոյն տխմարը պիտի լինիմ, ինչ որ հիմա։ Միտդ չէ ինչ ասաց ինձ երէկ քո հայրը, որ այնքան բարի է դէպի ինձ։ «Սիրելի Լուկա, ասաց նա, սիրահարուել Պաշիֆիկայի վրայ միւնոյն է թէ սիրահարուել լուսնի վրայ։ Եթէ նա իմ աղջիկը լինէր՝ ես հազարի մէջ քեզ կընտրէի ինձ փեսայ քո ազնիւ սրտիդ համար, բայց ուրիշ արարած է իննեղէթտօն։ Նա քեզ աղջիկ չի տալ, որովհետեւ դու կարող ես շատ շատ՝ դեղատան հաւանգ նախշել, կամ դալլաքի թաս, իսկ իննեղէթտօն իր աղջկայ համար փնտրում է տաղանդաւոր նկարիչ, թէկուզ միւս ամեն բանով մարդկային ոչ մի արժանիք չունենայ։ Խնդրեմ չնեղանաս իմ այս խօսքերիս համար, ես միայն քո բարիդ կամենալովս է, որ ա-

ասում եմ: Եթէ ես քեզ պէս մի գեղեցիկ և  
ուժեղ պատանի լինէի՝ կերթալի ֆրանսիա  
կամ Սպանիա, այնտեղ կամաւոր գինուոր դառ-  
նալու: Դու ծնուած ես գինուոր դառնալու  
համար և ոչ նկարիչ... Եւ այս բոլորն ինձ  
ասաց քո հայրը, սիրելի Ռափայէլ, և շատ  
ճշմարիտ է նրա բոլոր ասածը:

— Իսկ Պաչիֆիկան, ասաց երեխան, մի-  
թէ նա չէր գնալ քո ետևից:

— Աստուած գիտէ, պատասխանեց Լու-  
կան յուսակտուր. — գուցէ և չէր գնալ:

— Իսկ ես հաւատացած եմ, որ կը գնայ,  
ասաց Ռափայէլը. — կը գնայ, որովհետեւ նա  
քեզ սիրում է, Լուկա, թէև չի խոստո-  
վանում: Զէ որ նա աղջիկ է, և բացի դրա-  
նից, պարօն Բենեդէթտօն էլ հակառակ է ձեր  
ամուսնութեանը: Գիտես ինչպէս է սիրում  
նա քո ընտելացրած կարմրալանջ թռչնիկը.  
Ե հարկէ նա սիրում է այդ լիմար թռչնիկը կի-  
սով չափ դէպի քեզ ունեցած սիրոյն համար և  
կիսով չափ էլ իր թռչնասիրութեան համար:

Լուկան՝ սաստիկ յուզուելով՝ համբուրեց  
նրան: Աչքերից մկօԵց արտասուք կաթկիթի:  
Նա բոլոր հոգովը սիրում էր Պաչիֆիկային.  
շատ մեծ էր նրա վիշտը:

— Եթէ մինչև անգամ ինձ սիրելիս լինի՞

այդ երբէք չի ասիլ նա ինձ, — շշնջաց Լուկան  
յուսահատուած, — որովհետեւ հայրը նրան թոյլ  
չի տալ իմ մասին մտածել անգամ: Եւ մի-  
թէ հէնց հիմա պիտի գար դուքսի հրամանը,  
որ մրցութիւն լինի: 0՝ եթէ ես զրկուեմ  
Պաչիֆիկայից՝ այնուհետեւ էլ ինձ ուրիշ բան  
չի մնալ, բայց թէ երթալ և կամաւոր նիզա-  
կակիր դառնալ...

Պափայէլը փոքր ինչ խորասսուզուեց մտքի  
մէջ, յետոյ բարձրացրեց զլուխը և ասաց.

— Ես մի բան մտածեցի, Լուկա, բայց  
չգիտեմ, թոյլ կը տամ ինձ որ մի փորձ անեմ:

— Դու իմ մանուկ հրեշտակ, միթէ Լու-  
կան կարող է քեզ մերժել, ինչ որ ուզենաս  
դու նրանից: Բայց եթէ դու կամենում ես  
օգնել ինձ այդ միտքը հանիր գլխիցդ. — ոչ  
ոք կարող չէ օգնել ինձ, և ոչ անգամ սուլ-  
բերը կարող են օգնել, որովհետեւ նրանք կա-  
րող չեն ինձ նկարիչ շինել. մի բան, որ Աս-  
տուած չի տուել, սուրբերն ինչ կարող են  
անել:

Պափայէլը համբուրեց Լուկային և ասաց.

— Այո՛, բանն Աստուծով կը լինի, ուրեմն  
դու սպասիր:

Մի քանի օրից յետոյ Բենեդէթտօն, ա-  
շակերտներին հաւաքելով՝ հանդիսաւոր կեր-

պով լայտարարեց նրանց թէ դուքսի պատուէրի և թէ այդ առկիթով իր արած խոստմունքի մասին։ Թէև այդ ջահիլների մօտ աղջրկալ անունը չտուաւ, բայց խօսեցածն այնքան պարզ էր, որ ամենքն էլ լաւ ըմբռնեցին, որ դուքսն ում շինած բանը որ հաւանինա էլ կը դառնայ ոչ միայն Բենեդէթտօի ընկերը, այլ և նրա փեսան։

Այդ ժամանակները շատ էլ ուշադրութիւն չէին դարձնում, թէ իրանք աղջկէքը ում են ցանկանում գնալ, այլ ծնողները տալիս էին՝ ում որ իրանք էին լարմար տեսնում։ Ուրեմն ոչ ոք Բենեդէթտօին ոչ խրստասիրտ կը համարէր և ոչ անարդար, եթէ նա աւելի իր օգտի մասին մտածէր, քան թէ աղջկալ բախտաւորութեան։ Բայց երբ որ Բենեդէթտօն մրցութիւնն առաջարկեց ոչ մենակ իր աշակերտների մէջ, այլ բոլորին էլ, որոնք ծնուած էին Ուրբինում՝ այդ ժամանակ մեր պատանիների սիրտը ահ ընկաւ և կասկած։ Ո՞վ կարող էր ասել, թէ այնքան բազմութեան միջից չէր դուրս մի նոր տաղանդ՝ որ արժանանար թանգագին մրցանակին, իսկ նրանք, որոնք լոյս ունէին, մնան բերանները բաց։ Ի՞նչ կասկած, որ ով արժանանար Պաչիֆիկալի ձեռքին՝ նրա հետ նա

կստանար և ահագին ժառանգութիւն—մեծ քանակութեամբ ոսկիք, հոլակապ և հրաշակերտ տուն, անթիւ ակնեղեն, հին ոսկեգործ կտորներ և բաւական մեծ կալուածք քաղաքից դուրս, որ ծածկուած էր կանաչագեղ արտերով և պտղատու ծառերով։

Լուկան ամենեին չէր մտածում այդ ժառանգութեան մասին, այլ միայն Պաչիֆիկալի, իսկ միւսները ամենամեծ նշանակութիւնը հէնց այդ հարստութեանն էին տալիս։ Եթէ Բենեդէթտօն պալման չըլինէր գլուխած, որ մրցողները միայն իր ծննդարանից լինին՝ այն ժամանակ Խտալիալի ամեն ծալրից էլ կը գալին շատ նշանաւոր նկարիչներ։ Նրանք կը գալին ժուշելով, ինչքան որ կարող էին ժուցնել իրանց ձիաները, որ շուտ հասնեն, և ալդ հարստութիւնը ձեռք բերելու համար, չէին քաշուիլ կաւի վրայ քաշել ալն, ինչ որ կտաւի վրայ էին նկարում։ Բայց մրցողները պէտք է լինէին միայն Ուրբինում ծնուածները, և այս պատճառով Լուկան պէտք է գոհ լինէր իր բախտից, որ իր ախոյեանների թիւն այնքան քիչ էր։

Մէկ անգամ Ռափայէլի հալրը Զիովանին վստահացաւ ասել Պաչիֆիկալի հօրը.

— Եթէ ձեր տեղը լինէին՝ ես փեսացու կընտ-

թէի ոչ թէ մի լաւ նկարչի, այլ հասարակ,  
բայց լաւ երիտասարդի, որովհետև, չբարկա-  
նաս, բարեկամ, միշտ չի պատահում, որ մէ-  
կը մեծ նկարիչ լինի և միենոյն ժամանակ  
լաւ էլ մարդ: Եթակը մարդու համեստ առա-  
քինութիւններն աւելի ունին իրաւունք, քան  
թէ տաղանդը:

Այս խօսքերը լսելիս Բենեղէթտօի երե-  
սը թիխպեց. նա մտիկ արաւ խոժոռած աչքե-  
րով, որովհետև զատ լաւ իմացաւ, թէ Զիո-  
վանին ում էր համարում լաւ փեսացու, ում  
համար էր ուզում բարեխօսած լինի:

— Ոչ, Զիովանի, պատասխանեց Բենե-  
ղէթտօն, —ինձ հարկաւոր է լաւ նկարագէտ  
իմ գործարանիս համար, որ նրա անունը  
բարձր պահէ և աւելի ևս բարձրացնէ: Իմ  
տեսողութիւնս թուլանում է. և ես չեմ  
ուզում տեսնել, թէ ինչպէս է կոտրում  
Ուրբինօի արտադրութեան անունը, իսկ  
միւս քաղաքներինը՝ բարձրանում: Պաչիփիկան  
պէտք է զոհ բերէ ինքն իրան, եթէ կարելի  
է զոհ անուանել մեծ նկարագէտի կին՝ լինելը:

Ուրախ և սրամիտ Զիովանին ժպտաց  
իր մտքումը և սուս ու փուս գնաց իր ճա-  
նապարհը: Նա երբէք զլուխ չէր խոնարհեց-  
նիլ ալսպիսի ինքնավստահութեան և ինքնա-

սիրութեան առջև: «ԽԵՂԱ Պաչիփիկայ, մտա-  
ծում էր նա, շատ ափսոս, որ իմ Ուաֆայէլս  
մի տասը տարով մեծ չէ»: Նա չէր գուշակում, թէ ի՞նչ փայլուն և  
հրաշալի ապագայ է սպասում իր որդուն, և  
աւելի շատ բան չէր պահանջում, քան թէ  
տեսնել նրան իր մայրենի քաղաքում համեստ  
նկարչի արուեստում, ապահովուած Ուրբինօի  
գուքսի հովանաւորութեամբ և պաշտպանու-  
թեամբ:

Բայց ի՞նչ էք կարծում, այս քանի օր է,  
ո՞րտեղ էր գտնւում Ուաֆայէլը: Որտեղ: Ան-  
շուշտ Լուկայի վերնատանը: Նա այնտեղ նըս-  
տած էր, առջեր դրած մի մի ահագին պնակ  
և ըմպանակ: Այդ վերնատունը մի բաց և  
հովտեղ էր: Ամեն մի աշակերտ ուներ իր ա-  
ռանձին վերնալարկը: Լուկան միայն հիմա իմա-  
ցաւ իր վերնատան արժէքը, որովհետև եթէ  
արդպիսի մի ընդարձակ և առանձին տեղ չու-  
նենար՝ չէր կարող իր մօտ տեղաւորել իր  
միակ բարեկամին և պահապան հրեշտակին:  
Խորհրդաւոր խօսքերը, որ Ուաֆայէլը շշնչաց  
Լուկայի ականջում նրա սրտի գաղտնիքն ի-  
մանալու օրը, այս էր թէ՝ «թոյլ տուր ինձ,  
որ ես քո փոխանակ նկարեմ»:

Երկար ժամանակ Լուկան ոչ միայն վա-

խենում էր համաձայնութիւն տալ, այլ որ չը  
ծիծաղեց էլ՝ այդ միայն նրա համար, որ չու-  
զեց երեխակի սիրտը կոտրել։ Ինչպէս, մի  
մատը երեխայ, որի եօթը տարին գեռ նոր է  
լրացել, հանդէս է գալիս և ուզում է գուք-  
սի խիստ պատուէրը ամենից լաւ կատարել։  
Ոչինչ բան չէր կարող Լուկայի ինդալը ըըռ-  
նել, բացի Ուափաէլի դէմքի լուրջ և լուսա-  
փալ արտայատութիւնը, որ ցոյց էր տալիս,  
թէ մեծ հաւատ ունի իր վրայ և աւելի մեծ՝  
երկնքի և նրա ձիրքերի վրայ։

— Դու ինձ թոյլ տուր միայն փորձեմ,  
— հարիւր անգամ կրկնեց երեխան։ Ես ոչ  
ոքի չեմ ասիլ, միայն քեզ կը լինի յայտնի։

Կը յաջողի՝ լաւ, չի յաջողի՝ նա կարող է  
վճարել փչացրած բաների գինը. նա ամբողջ  
երկու ոսկի ունէր, որ ընծայել էր նրան դուք-  
սը, երբ որ եկել էր տեսնելու նրա հօր քա-  
շած պատկերները եկեղեցու պատերի վրայ։  
Երեխան այսպէս լուրջ և տաք կերպով հա-  
մոզել էր ուզում, իսկ Լուկան էլ այնպիսի  
յուսահատ վիճակի մէջ էր, որ վերջապէս հա-  
մաձայնեց։

— Ես երբէք մի լաւ բան չեմ կարող շի-  
նել, ասաց Լուկան, նայելով իր կոպիտ ու-  
խամ նկարների վրայ։ — Սուրբերը հրաշքներ

են գործել միայն հրեշտակների օգնութեամբ։  
— Այս հրաշք չի լինիլ, ասաց Ուափաէլը։  
Ես կը նկարեմ միայն այն, ինչ որ Աստուած  
դրել է իմ մէջ։

Այդ օրուանից Լուկան թոյլ տուաւ նը-  
րան, որ ինչ ուզում է՝ անէ, և երեխան գա-  
լիս էր ամեն օր, փակւում վերնայարկումը։  
Նա և՛ ուսումնասիրում էր և կշռադատում,  
և աշխատում. մերթ կնճռում էր ունքերը և  
մերթ ուրախ ժպտում, նայած թէ ո՞րպիսի  
հոգեկան տրամադրութեան մէջ էր գտնւում  
և ո՞րքան էր առաջ գնում ձեռնարկած գործը։  
Զիովանի Սանցիօն այս միջոցին իրանց  
քաղաքումը չէր. նա գնացել էր ուրիշ տեղ՝  
եկեղեցի նկարելու։ Այս անգամ Ուափաէլը  
շատ ուրախ էր հօր բացակայութեան համար,  
որովհետև նա կը նկատէր, թէ ո՞րտեղ է ու-  
շանում տղան և ո՞ւր է բացակայում այնպէս  
շուտ շուտ, և կը հարկադրէր, որ տանը նստէ  
և լատիներէն դասը սերտէ, կամ դուրս կը  
հանէր տանիցը, որ գնայ դաշտերում ա-  
զատ օդ շնչէ։ Ուափաէլի մայրը ոչինչ չէր  
ասում, կարծելով, թէ նա գնում էր Պաչե-  
ֆիկալի մօտ, որ նրան մօրիցն էլ լաւ կը  
պահպանէր։ Իսկ Պաչեֆիկան էլ զարմացած  
էր մնացել, թէ ինչո՞ւ նա իրան թողնում էր

և գնում վերնայարկը՝ Լուկայի մօտ։ Մէկ անգամ, երբ նա հարցրեց այս մասին՝ փոքրիկ չարաձճին ընկաւ Պաշիֆիկայի վզովը և շնչաց նրա ականջումը.

— Օ՛, Պաշիֆիկա, ես ուզում եմ, որ Լուկան արժանանայ քո ձեռքին, որովհետեւ նա շատ է սիրում քեզ, իսկ ես երկուսիդ էլ սիրում եմ։

Աղջիկը սփրթնեց և ասաց նրան։  
Օ՛, հոգեակս, եթէ սրտինդ կատարուէր։ Ել ոչ մի խօսք չասեց. նստեց իր ճախարակի մօտ, և Ռափայէլը նկատեց, թէ ինչպէս արտասուբքի խոշոր կաթիլներ են թափում նրա մանածի վրայ։

Պաշիֆիկան կարծում էր, թէ Ռափայէլը գնում էր տեսնելու, թէ ինչպէս է առաջ տանում Լուկան իր գործը, և սրա համար աւելի էլ սիրեց նրան. բայց շատ լաւ գիտէր, ինչպէս և ինքը Լուկան, որ այդ քաջասիրտ պատանին երբէք կարող չէ այնպիսի բան նըկարել, որ գուքսի ուշադրութեանն արժանանայ։

Եւ ինչպէս ցաւում էր Պաշիֆիկայի սիրտը խեղճ Լուկայի համար։ Նատ քիչ էր պատահում, որ նրանք հանդիպին միմեանց և մի քանի խօսք ասեն իրար։ Երբեմն միայն

յաջողեցնում էր Լուկան որ և է առիթով մօտենալ և մի քանի փաղաքշական խօսքեր ասել, կամ թարմ ծաղիկներ տալ. Երբեմն էլ երգում էր նրա սենեակի պատուհանների տակ սերենադներ։ Եւ ինչքան գեղեցիկ է Լուկան, վայելչակազմ, պարթևահասակ և քաղցրաբարոյ, և ինչպիսի յարգանքով է վերաբերում դէպի նա, ինչպէս պաշտում է Բարեսիրտ Պաշիֆիկայի հոգը չէր ամենեին, թէ նա լաւ է նկարում թէ ոչ. ինքը սիրում է նրան, ուրեմն առանց տաղանդի էլ բախտաւոր կը լինի նրա հետ։

Ռափայէլը իր բոլոր անցած կեանքում երբէք ալյնպիսի հոգսի մէջ չէր եղած, ինչպէս այդ օրերում, որ նա տնց էր կացնում իր բարեկամի վերնատանը։ Նա նոյն իսկ Լուկային էլ չէր թոյլ տալիս, որ տեսնի, թէ ինչ է շնուռ ինքը։ Նա աշխատելիս՝ դուռը կողքում էր, և երբ դուրս էր գնում՝ ամեն ինչ դնում էր պահարանումը և կողեքով փակում։

Բայց պատուհաններից ծիծեռնակները ներս ու դուրս էին անում, ճախրելով նրա գլխի չորս կողմը. ուրախ ճառագայթները ներս թափանցելով՝ մի տեսակ բակ էին բոլորում նրա ոսկեմազ գլխին, բոլորովին այն-

պէս, ինչպէս նրա հայրը՝ սուրբերի պատկերը նկարելիս՝ նրանց գլուխների չորս կողմը ճաճանչաւորում էր ոսկեգոյն լուսով։ Իսկ Ռափայէլը շարունակում էր իր գործը, առանց գլուխը բարձրացնելու, որ տեսնի ինչ է կատարւում իր չորս կողմում, կամ ինչ երաժշտութեան ձայն է, որ փողոցից հասնում է իր ականջին, այնքան լափակուած և վերացած էր նա իր գործը կատարելիս։  
Նա ընդամենը եօթը տարեկան էր, բայց այնպէս պինդ էր կաել իր գործին, ինչպէս հասակաւոր մարդ։

Նրա փոքրիկ վարդագոյն մատիկները սիմել էին այն մատիտը, որ պիտի փառաւորէր նրան այնպիսի փառքով, որպէս չեն փառաւորուած թագաւորները, նրանով պիտի ընկնէր անմահների կարգը։

Նախ քան իր գաղափարի մարմնացնելը՝ նա հարիւրաւոր թերթեր լցրեց զանազան տեսակ նկարներով։ Երբ որ վերջապէս իր գըլխումը պտտուող գաղափարը լաջողութեամբ արտայալտեց թղթի վրայ այնպէս, որ ինքը բաւական մնաց՝ այնուհետեւ սկսեց նոյնը գունաւոր ներկերով նկարել կատի վրայ։

Ի՞նչքան ուրախ էր այժմ, որ հայրը նըրան երկու տարեկանից արդէն սովորեցրել էր

նկարչութեան տարերքը, ուրախ էր և այն բանի համար, որ վերջին օրերում Բենեթէթոն էլ ցոյց էր տուել կատի վրայ նկարելու գաղտնիքը։

Մի նշանաւոր գրող ասել է, թէ հանձարը՝ տոկուն աշխատութեան ընդունակութիւն ունենալն է։ Աւելի ուղիղ կը լինէր, եթէ ասէր. հանճար ունեցողը ունենում է և տոկուն աշխատութեան ընդունակութիւն։ Բայց աւելի կարևորն այն է, որ հանճարը ընդունակ է ինքնակամ ստեղծագործելու գեղեցիկ բաներ՝ առանց մեծ ջանք գործ դնելու, այլ մեծ հաճոյքով և բաւականութեամբ։

Լուկան նայում էր երեխայի վրայ, բայց ոչ նրա գործին, որովհետեւ խօսք էր տուել երեխալին, և զարմացած էր մնացել, տեսնելով նրա ինքնակենտրոնացումը, ուշադրութիւնը և զիւրաշարժութիւնը, որից երևում էր, որ գործը հեշտութեամբ է առաջ գնում, և երեխան դժուարութեան չի հանդիպում։ Լուկայի աչքումը այժմ բոլորովին սրբացել էր Ռափայէլը, որ այդ ժամանակ այլ ևս հոգեղէնի չէր նմանում, այլ անմեղ և փոքրիկ հրեշտակի, որ թեւերը փուել էր սեղանի վրայ և մի հրաշալի բան էր ստեղծագործում։ Ռափայէլի դէմքն այժմ աւելի լուրջ

կերպարանք էր ստացել, նաև սփրթնել էր և  
թխաւուն խոշոր աչքերը աւելի էին խոշորա-  
ցել և մգացել:

—Պարոն Զիովանին սաստիկ պիտի բար-  
կանալ, —մտածում էր խեղճ Լուկան, բայց  
հիմա այլ ևս ուշ էր, բանն սկսուած էր, էլ  
յետ դառնալ չէր կարելի. երեխան հիմա իր  
ուսուցիչն էր:

Այսպէս Ռափայէլը անընդհատ աշխա-  
տում էր վերնատանը, և ոչ ոք չգիտէր այդ,  
բացի Լուկայից: Կակաչներն արդէն փիթթել  
և թառամել էին, ցորենի և գարու հունձն  
սկսուել էր. ամառը հասել էր իր կիսին,  
և նշանակուած երեք ամիսն անցել էր ար-  
դէն, մնացել էր միայն վերջին շաբաթը: Յալտ-  
նի եղաւ, որ բոլոր նկարիչները պատրաստ են  
նշանակուած մրցութեան համար: Այս վերջին  
շաբաթուայ մէջ մի երեկոյ Ռափայէլը բոնեց  
Լուկայի ձեռքից և ասաց. —Գնանք:

Նա Լուկային տարաւ վերնատունը և  
մօտեցրեց այն սեղանին, որի վրայ անց էր  
կացրել ամառուայ ամենալաւ և ուրախ օրե-  
րը, այն երկար իննսուն օրերը, որ ժամանակ  
էր տուած դուքսի պատուէրը պատրաստե-  
լու համար:

Լուկան մօտեցաւ սեղանին թէ չէ զար-

մանքից և ապշութիւնից մի ճիչ արձակեց  
և մեխուեց տեղնուատեղը և սկսեց նայել,  
նայել, նայել: Յետոյ ծունկ չոքեց երեխալի  
առջե և գգուեց նրա փոքրիկ տոտիկները:  
Այս առաջին երկրպագութիւնն էր, որ ստա-  
ցաւ իր մարդ եղբօրից նա, որի կեանքը յե-  
տոյ դարձաւ մի գովասանական օրհներգու-  
թիւն:

—Իմ թանգագին Լուկաս, ալդպէս մի  
անիլ, ասաց երեխան հանդարտ: Եթէ իմ գոր-  
ծը իրաւի այդքան լաւ է՝ պէտք է ուրեմն  
Աստուծուն տանք գոհութիւն:

Ահա թէ ինչ տեսաւ նրա բարեկամը:  
Սեղանի վրայ դրուած էին մի մեծ ձուաձեւ  
բլիւդ և մի մեծ էլ ըմպանակ կամ վազա,  
երկուսն էլ լցուած արեփ ճառագալթներով,  
փայլում էին անգին քարերի նման: Նրանց  
վրայ նկարուած էին շնորհաշուք ալլաբանու-  
թիւններ և կլասիքական նկարներ: Բոլորի  
շուրջը պատել էր քերոբէներով և ծաղկնե-  
րով, որոնք պսակի ձեռվ բռնած ունէին տե-  
ղական դքսութեան դրուագը: Մէջ տեղը նը-  
կարած էր դաշտային և լեռնային տեսարան-  
ներ Ուրբինօի շրջապատից վերցրած: Սարերի  
գագաթից ցոլանում էին արեսի վերջին ճա-  
ռագալթները: Բոլոր նկարների մէջ գլխաւոր

տեղը բռնում էր Եսթերի պատկերը, սպիտակ հագուստով և ոսկի թագով։ Այդ պատկերի մէջ մանուկ նկարիչը դուրս էր բերել Պաշիֆիկայի դէմքի գծերը։ Եւ այդ հրաշալի ստեղծագործութիւնը, որ ստեղծուել էր մանկիկի ձեռքերով՝ դուրս եկաւ հնոցից բոլորովին անվնաս և անփորձ, առանց որ և է ճաքի և բժի։

Լուկան դեռ ընկած էր ծնկի վրայ երեխայի ոտքերի տակ, ինչպէս լետոյ ծունկ չոքեց նրա առջև ամբողջ աշխարհը։

Օ՛, սքանչելի երեխայ. Հրեշտակ Աստուծոյ, ուղարկուած մարդոց մօտ, — ասում էր խեղճ աշակերտը, սքանչանալով նրա գործից, և նրա սիրտը այնպէս էր լցուել, որ հեղեղուեց արտասունքով։

— Գոհանանք Աստուածանից, նորից կըրկնեց Ուափալէլը, և ծալելով իր ձեռնիկները, որոնք գործել էին այդ հրաշալիքը, նա մեղմ կերպով արտասանեց մի ազօթք։

Երբ որ թանգագին պնակը և ըմպանակը դրաւ պահարանումը և փակեց մեծ պողպատի փականքով, Լուկան նրան ասաց խեղճ խեղճ, զգալով, որ արհեստի կողմից քսան տարով փոքր է այդ աստուածապէս մանուկից։

— Բայց, իմ հոգեակս, ես չգիտեմ, ինչ օգուտ կարող է տալ ինձ քո հազուագիւտ և սքանչելի ձեռագործը։ Եթէ մինչև անգամ ինքդ թոյլ տայիր ինձ, որ ես այդ իմս համարեմ, ես երեք չէի համաձայնիլ այդ բանին։ Այդ այնպիսի մի խաբերայութիւն կը լինի և խայտառակութիւն, որ ես չեմ կարող վրաս առնել, թէկուզ զըկուելու լինիմ Պաշիֆիկայի ձեռքից։

— Մի տաքանալ այդպէս, Լուկա, պատասխանեց Ուափալէլը. դեռ սպասիր փոքր ինչ։ Ես գիտեմ ինչ եմ անելու. դու միայն հաւատա ինձ։

Ինքը Երկինքն է խօսում քո բերանից, դրան ես հաւատում եմ, ասաց Լուկան հեղութեամբ։

Ուափալէլը պատասխան չտուաւ։ Նա վայր վագեց Պաշիֆիկայի մօտ, փաթաթուեց նրա վզով և սկսեց փայփալէլ նրան մի առանձին սիրով։

— Պաշիֆիկայ, իմ անուշիկս, զօրացիր և ուրախ կաց. շշնջաց Ուափալէլը, և այլ ևս ժամանակ չտալով, որ նա հարց ու փորձ անէ. դուրս փախաւ և գնաց իր մօր մօտ։

— Կարելի բան է, որ Լուկային լաջողուած լինի մի լաւ բան նկարել, մտածեց

Պաշիփիկան։ Եօթը տարեկան երեխան ի՞նչ  
դատաւոր կարող է լինել, թէ կուզ նա լինի  
նկարիչ և բանաստեղծ Զիովանի որդին։

Միւս օրը ամառային արևադարձի օրն  
էր։ Բոլոր շնուռածները պէտք է ի ցոյց գը-  
րուէին Բենեդէթտօի արուեստանոցումը։ Սուա  
սում էին Գուրիդոբալդո դուքսի գալուն։

Բենեդէթտօն լայտարարեց, որ ի՞նքը չը  
պիտի տեսնի ի ցոյց գրուած բաները, այլ պի-  
տի սպասի դուքսին և նրա հետ ի միասին  
կը նայէ եղածներին։ Նրա այսպէս վարուելու  
պատճառն այն էր, որ ուզում էր ցոյց տալ,  
թէ ինքը բոլորովին անտարբեր է և անաշառ,  
ոչ ոքի առանձնապէս չունի ի նկատի, բացի  
սրանից՝ ինքն ևս պալատական լինելով՝ ու-  
զում էր իրան բարձր պահել։ Իսկ ի՞նչ որ վե-  
րաբերում էր Պաշիփիկալին՝ նրա սիրտը ւըլլ-  
քում էր, որովհետեւ իր բախտի որոշուելու  
օրն էր. նա վրդովուած և յուզուած ֆակուել  
էր իր սենեակումը։ Միւնոյն ժամանակ մըր-  
ցութեան մասնակցող երիտասարդները, ման  
էին գալիս կոտրտուելով, տնագ էին անում  
ուրիշներին և պարծենում իրանցով. միայն  
խեղճ Լուկան էր, որ քաշուել էր մի հեռա-  
ւոր անկիւն և այնտեղ նստած ձնկճնկացնում  
էր Հին քնարի թելերը։

Զիովանի Սանցիօն նախընթաց երեկոյին  
քաղաք էր հասել ձիով և հիմա եկել էր տա-  
նիցը, որ տեսնի, թէ ի՞նչ բաներ կան ի ցոյց  
դրուած։ Մտնելով արուեստանոցը՝ մօտեցաւ  
Լուկալին, ձեռքը դրաւ ուսին և ասաց.

Ես լսեցի, որ պիզարցիք շատ լաւ լաւ  
բաներ են պատրաստել, բայց դու քաջ երիք,  
մի վախենար։ Մենք կը խնդրենք դուքսին,  
որ միջամտէ քո գործումը և պաշտպան հան-  
դիսանայ. նա յետ կը կանգնեցնէ Բենեդէթ-  
տօին իր քմահամ վճռից։

Լուկան գլուխը շարժեց։ Նա գիտէր, որ  
ամենալաւ գործը Ուափայէլինն էր, բայց գը-  
րանից ի՞նչ օգուտ իրան։

— Ձեր երեխան... երեխան... կմկմաց  
Լուկան, և քիչ էր մնում, որ երեխալի գաղտ-  
նիքը բաց անէր, բայց շուտով լոեց։

— Դու իմ որդու մասին ես հարցնում,  
ասաց Զիովանին։ — Նա հէնց հիմա կը գալի։  
Մի տեղ պատկերահանդէս լինի և նա ներկայ  
չլինի՝ ալդ անկարելի է։

Բարի ծերունին գուրս եկաւ արուեստա-  
նոցից, որ գնալ բարևելու Բենեդէթտօին։  
Բենեդէթտօն կանգնել էր փողոցումը կաս-  
կարմիր թաւշեալ կաբալով, մթագոլն թաւշեալ  
բաճկոնով, գլուխը բաց, սպասում էր գիմա-

ւորել դուքսին հէնց որ կը լսի նրա ձիու  
տրոփիւնը:

— Դուք այսօր սաստիկ վրդովուել էք,  
ինչպէս երեսում է, ասաց նրան Զիովանին:—  
Ասում են՝ պիզարցի մի պատանի մի շատ լաւ  
բան է շինել: ուրեմն դուք պիտի հարկա-  
գրուիք օտար և անծանօթ մէկին ընդունել  
ձեր արուեստանոցում և մինչև անդամ ձեր  
տանը:

Եթէ նա իրաւի մի հանճարաւոր մարդ  
է՝ նա էլ կը լինի իմ ցանկալի հիւը, յայ-  
տարարեց Բենեդէթտօն փքուն գոռողու-  
թեամբ:

— Աստուած տալ, որ ձեր վճիռը ձեր տան  
համար ուրախութիւն և փառք բերէ, ասաց  
Զիովանին, լաւ իմանալով, որ իր հարկանը  
թէւ անբիծ մարդ է՝ բայց չափից դուրս սնա-  
փառ է և շատ է գոռողանում իր բարձր դիր-  
քով Ուրբինում:

— Դուքսը գալի՞ս է, ձայն տուաւ ժո-  
ղովուրդը, որ խռնուած էր փողոցումը:

Պարոն Բենեդէթտօն դուրս եկաւ դուք-  
սին ընդառաջ:

Պափայէլը կամացուկ ներս սողաց իր  
հօր մօտ և իր ձեռքը դրաւ նրա ձեռքումը:

— Դու հօ չես վախենում մեր բարի

Գուիդօքալդօից, նկատեց նրան հայրը, տես-  
նելով՝ որ Մափայէլը գոյնը նետել է և վարի  
պոօշը կարծես դողում էր:

— Զեմ վախենում, պատասխանեց երե-  
խան:

Դուքսը և իր հետևորդները ձիաւորուած  
մօտեցան և կանգ առան Բենեդէթտօի տան  
առջև: Դրանք ամենքն էլ մեծամեծ իշխան-  
ներ էին, չնայած նրանց առաւոտեան պարզ  
հագուստին. ամենի ձիաներն էլ բուն արա-  
բական ազնիւ նժոյգներ էին: Փոքրիկ պա-  
ժերը և սպասաւորները գալիս էին նրանց  
ետևից: Եթէ Գուիդօքալդօն սովորաբար գը-  
նում էր որսի կամ ազնուականներին այցե-  
լութեան՝ այդ ժամանակ նա իր հօր նման  
ոտքով էր գնում, ինչպէս ամեն մի քաղա-  
քացի. բայց հիմա իմանալով Բենեդէթտօի  
փքուն և սնափառ բնաւորութիւնը, և բա-  
րեհոգութեամբ ուզենալով բաւականութիւն  
տալ նրա անվնաս սնափառութեանը՝ նա վեր  
առաւ իր հետ և իր շքախումբը:

Բենեդէթտօի տանը մօտենալով՝ դուքսն  
իշխաւ ձիուցը, իսկ Բենեդէթտօն գլուխը կախ  
գցած՝ լետ լետ գնալով՝ երեսը դէպի դուքսի  
կողմն արած՝ տարաւ նրան իր արուեստանո-  
ցը: Պալատականները հետևեցին նրան: Զիո-

վանի Սանցիօն իր որդու հետ և մի քանի  
ընտրեալ քաղաքացիներ գնացին նրանց ետե-  
ւից՝ փոքր ինչ հեռու նրանցից։ Արուեստա-  
նոցի ամենահեռաւոր անկիւնում կանգնած  
էին Բենեդէթտօի աշակերտները և նկարիչ-  
ները Պիգարօից և դքսութեան ուրիշ քաղաք-  
ներից, որոնց գործերը նոյնպէս ի ցոյց էին  
դրուած։ Բոլոր մրցողները թուով տասը հո-  
գի էին։ Նրանցից միայն խեղճ Լուկան էր  
հեռացել և կանգնել միայնակ վանդակապատ  
պատուհանի խորշումը, ծածկելով ամենից իր  
լուսահատութիւնը։

Նեղ ու երկալն նստարանների վրայ, ո-  
րոնք բանի ժամանակ սեղանների պաշտօն  
էին կատարում աշակերտների համար, շա-  
րուած էին պնակներ և սափորներ, վրանները  
թուահամար կպցրած, առանց նշանակելու  
նկարողների անունները, որովհետեւ պարոն  
Բենեդէթտօն դրանով ուզեցել էր ցոյց տալ  
իր անաշառ վերաբերութիւնը դէպի մրցողնե-  
րը։ Նա յաջողութիւն էր ցանկանում նկարիչ-  
ներից ամենաճարտարին։

Գուիդօբալդո դուքսը քաղաքավարու-  
թեամբ վեր առաւ գլխարկը, երկար սենեա-  
կով անցնելով՝ սկսեց դիտել ամեն մի գործը  
հերթով։ Ընդհանուր առմամբ ցուցահանդէսը

բաւական հարուստ ժողովածու ունէր, բայց  
նա այսու ամենայնիւ մի քիչ հիամթափուած  
էր երեսում, որովհետեւ նա ցանկանում էր  
ունենալ սովորականից դուրս և բոլորովին  
կատարեալ մի բան։ Սակայն նա բարեհաճու-  
թեամբ շնորհաւորում էր Բենեդէթտօին իր  
սարքած ցուցահանդէսի համար, միայն խեղճ  
Լուկալի շինածի առջև ոչ մի խօսք չասեց,  
որովհետեւ լուութիւնը ամենամեծ ողորմու-  
թիւնն էր, որ նա կարող էր ցոյց տալ նրան։  
Լուկալի նկարը կանոնաւոր էր, բայց ներկե-  
րը շատ կոպիտ էին. աչք էին ծակում, վատ  
էին դասաւորուած։

Վերջապէս յանկարծ մի զարմացման և  
հիացման ձիչ արձակեց դուքսը պնակի և վա-  
գալի առջև, որոնք համեստութեամբ դրուած  
էին սեղանի ամենահեռաւոր ծայրումը։ Բե-  
նեդէթտօն կարմրատակեց ուրախութիւնից և  
զարմացումից։ Զիովանի Սանցիօն ևս ներս  
սիմուեց դէպի առաջ, և աշխատում էր պա-  
լատականների ուսերի վրայից տեսնել, թէ  
ինչո՞վ է յափշտակուել դուքսը, առաջուց ի-  
մանալով՝ որ հասարակ նկարի առջև նա ձիչ  
արձակող չէր։

—Այս բանը ամենայն համեմատութիւ-  
նից բարձր է, ասաց դուքսը և խորին յար-

գանքով ձեռքն առաւ մեծ և ձուաձեւ պնակը:—Վարպետ Բենեդիթո, ես ձեզ շնորհաւորում եմ այսպիսի տաղանդաւոր աշակերտ ունենալուդ համար: Նա կը բարձրացնի մեր սիրած Ուրբինօի փառքը:

— Ճշմարիտ որ դա շատ նշանաւոր աշխատութիւն է, ամենառորմած դուքս, պատասխանեց վարպետը, ապշութիւնից դողդողալով, չվստահանալով իր զարմացումն ու հիացումը ցոյց տալ:—Այս պատճառով պիզարցու կամ կաստէլ-դուրանտցու շինած կը լինի, աւելացրեց նա, որովհետև նա շիտակ մարդէր. — Եմ արուեստանոցում ոչ ոք կարող չէ սրա նման մի բան շինել: Սա այնքան գեղեցիկ է:

— Սրան պէտք է գնահատել իր կշռի չափ ոսկով, ասաց դուքսը:—Մօտեցէք, պարոններ և նայեցէք: Ուրբինօի փառքը պիտի տարածուի Ապենինեան և Ալտեան սարերի միւս կողմը:

Մօտ գնացող պալատականները և քաղաքացիք լայտարարեցին, որ Ուրբինօում նրա նմանը տեսած չեն:

— Բայց ում շինածն է այս, անհամբերութեամբ հարցրեց դուքսը, նայելով աշակերտների և նկարիչների խմբի վրայ, որոնք

կանգնած էին հեռու անկիւնում:—Խնդրում եմ ձեզ, վարպետ Բենեդիթո, նկարչի անունը տուէք շուտով:

— Այս գործի վրայ դրուած է տասնը-մէկերորդ թուահամարը, ձայն տուաւ Բենեդիթուն:— ումն է այս թուահամարը, թողդուրս դայ և իր անունը տալ: Դուքսն ընտրել է այս գործը: Ի՞նչ էք սուս կացել, միթէ չէք լսում ինձ:

Գործաւորների խմբից ոչ ոք չշարժուեց տեղեցը: Երիտասարդ մարդիկը լուռ ու մունջ իրար երեսի էին մտիկ տալիս, չիմանալով թէ ով է այդ անանուն ախոյեանը: Զէ որ նրանք միայն տասը հոգի էին:

— Ե՛լ, դուք, բղաւեց Բենեդիթուն արդէն բարկացած:— Լեզուներդ չորացելէ, ի՞նչ է: Ո՞վ է նկարել այս բանը: Ինչո՞ւ էք լուսում: Այդ ուղղակի լանդգնութիւն է ձեր կողմից՝ չպատասխանել դուքսին և ինձ:

Այդ ժամանակ փոքրիկ Սանցիօն թողեց հօր ձեռքը մօտ գնաց և կանգնեց վարպետի առջեւ:

— Ես եմ նկարել այդ, ասաց նա, քաղցը ժպիտը բերանին:— Ես Ուափալէլս:

Կարո՞ղ էք ձեզ ներկայացնել այն ապշութիւնը, լուփշտակութիւնը, երկմտութիւնը,

Հարցումները, շփոթութիւնը, թրարանցումը և խառնաղակ ու հրճութից գովասանքները, երբ տեսան, որ հանճարաւոր նկարիչը մի փոքրիկ մանուկ է եղել: Միայն դուքսի ներկայութիւնն էր, որ չափաւորում էր ներկայ եղողների խորին զմալմունքն ու հիացումը, թէև ինքը դուքսը զգում էր, որ իր աչքերը լցւում են արտասունքով և սիրտը ուժգին բարախում: Նա ինքն անզաւակ էր, և ուրախութեամբ իր ամբողջ դքսութիւնը կը տար այն ուրախութեանը, որ այս ըոպէիս զգում էր Զիովանի Սանցիօն՝ սքանչելի մանկիկի ծնող հայրը:

Դուքսն իր պարանոցից հանեց ականակուռ ոսկի շղթան և կախեց Ուափայէլի ուսերից:

—Ահա քեզ առաջին մըցանակը, ասաց նա, դու էլի շատ մըցանակների կարժանանսա, հրաշալի մանուկ: Դու դեռ ևս ապրեմս կը լինիս, երբ ամենքս փոշի կը լինինք դառած:

Ուափայէլը, որ բոլոր ալդ ժամանակ հանդարտ էր և անշփոթ, համբուրեց դուքսի ձեռքը և դառնալով իր հօրը՝ հարցրեց.

—Ուզի՞ղ է արդեօք, որ ես եմ արժանացել մըցանակին:

—Բոլորովին ուզիղ է և ճշմարիտ, իմ հբեշտակիկս, ասաց Զիովանին:

Ուափայէլը նայեց վարպետ Բենեդէթտօի վրայ:

—Ուրեմն ես կը պահանջեմ ձեզանից և Պաչիֆիկալի ձեռքը:

Բոլոր շըջապատողները, մինչև անգամ յաղթուած և տիսրած նկարիչները ժպտացին:

—Օ՛, եթէ դու հասուն տարիք ունենայիր, անշուշտ իմ փեսաս կը դառնայիր, ինչպէս դարձար արդէն իմ սիրելին. ասաց Բենեդէթտօն:—Իսկ դու հանաք ես անում, ես ալդ գիտեմ: Բայց ուղիղն ասա, ինչ որ կամենում ես ինձանից: Քեզանից ոչ մի բան չեմ խնայիլ, հիմա դու իմ վարպետն ես:

—Ես ձեր աշակերտն եմ, ասաց Ուափայէլը, ժպտալով իր քաղցը և լուրջ ժպիտով, և ձեռքում խաղանելով թանգագին ընծան:

—Ես երբէք չեի կարող ալդպիսի բան նկարել, եթէ դուք չսովորեցնէլիք ինձ ներկերի պատրաստելը և նրանցով գրելը: Հիմա, իմ թանգագին վարպետ, և դուք, իմ դուքս, լսեցէք ինձ: Զէ՞ որ ես մըցութեան պայմանի համաձայն արժանացել եմ Պաչիֆիկալի ձեռքին, և ունիմ իրաւունք՝ վարպետ Բենեդէթտօի ընկերը դառնալու: Ես ընդունում եմ իմ

իրաւուրքները և տալիս եմ իմ ամենալաւ  
բարեկամիս՝ Ֆանօեցի Լուկային, որովհետեւ  
նա ամենաշխտակ մարդն է բոլոր աշխարհիս  
երեսին, նա յարգում է պարոն Բենեդէթտօին  
և սիրում է Պաշտիկային այնպէս, ինչպէս  
ոչ ոք, և Պաշտիկան էլ Լուկային է սիրում:  
Դուքսն անշուշտ կասի, թէ լաւ կը լինի, որ  
այսպէս լինի:

Այսպէս խօսեց մանկական անմեղ վստա-  
հութեամբ այս եօթը տարեկան նկարիչը, որ  
նոյնտեղ հաւաքուած բոլոր հասակաւոր նկա-  
րիչներից բարձր էր:

Պարոն Բենեդէթտօն կանգնել էր լուռ,  
մթնած և յուզուած: Լուկան արագութեամբ  
մօտ եկաւ և հատ ծնկնով չոքեց նրա առ-  
ջևը: Նա սփրթնած էր քաթանի պէս: Ու-  
փայէլը նայում էր նրա վրայ ժպտարով:

—ՄԵՇՔ դուքս, ասաց Ուափայէլը, —դուք  
հօ ընտրեցիք իմ գործը, ուրեմն պաշտպա-  
նեցէք իմ իրաւունքը:

—Լսեցէք այս հրեշտակին, իմ բարի Բե-  
նեդէթտօ: Ինքը Երկինքն է խօսում սրա բե-  
րանով, ասաց դուքսը, ձեռքը դնելով վար-  
պետի ուսին:

Պարոն Բենեդէթտօի աչքերից արտասուք  
հոսեց:

—Ոչ մի բանում չեմ կարող մերժել սը-  
րան, ասաց նա հառաչելով: Սա կը փառաւո-  
րէ մեր Ուրբինո քաղաքը այնպիսի փառքով,  
որպիսին դեռ ևս տեսած չէ աշխարհը:

—Կանչեցէք ուրեմն ինձ մօտ սիրունիկ  
Պաշտիկային, որի ձեռքին արժանացել է  
Ուափայէլը, ասաց դքսութեան հրամայողը:—  
Ես կը տամ նրան այնքան օժիտ, որքան ոս-  
կի որ կը տեղաւորէ իր մէջ հոչակաւոր վա-  
զան: Դուք, վարպետ Բենեդէթտօ, աւելի լաւ  
ինչ արած կը լինիք, քան թէ այն, որ ձեր  
աղջիկը կը տաք այս ազնիւ երիտասարդին, որ  
սիրում է նրան և սիրում նրանից: Կանգնիք,  
ազնիւ պատանի, և բախտաւոր եղիք: Այսօր  
Երկնքից հրեշտակ է եկել ձեզ մօտ այս սքան-  
չելի մանկիկի կերպարանքով:

Բայց Լուկան ոչինչ չէր լսում: Նա ա-  
ռաջուայ պէս չոքած էր Երեխայ-Հանճարի ոտ-  
քերի տակ, որի առջև ամբողջ աշխարհն է  
ծունկ չոքում մինչև այսօր:

A circular blue stamp with a double-line border containing the text "MS. B. 1. 16. 1834". The stamp is oriented vertically and has a small asterisk (\*) at the bottom left corner.



1182

2013

59	Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ —	50
60	Փորձանքների բժշկարան, Բրօքերի, թ. 0. —	20
61	Մակրէթ, Նէկսպիրի, թարգմ. Ս. Մալիս. —	50
62	Պաստեօր, Ս. Բալաղեանի և Ա. Քալանթարի. —	20
63	Խօլերա, բժ. Վ. Արծրունու . . . . —	5
64	Խարազի տղայ, Ս. Քամաղեանի . . . . —	40
65	Հանրամատչ. Բնախօսութիւն, Վ. Լունկե- վիչի, թ. Կ. Գիւնազարեան . . . . —	1
66	Փարաւոնի աղջիկը, Երէրսի, թարգ. Գ. Յ. —	80
67	Խուն-Խոր, Յ. Լազարեանցի . . . . —	60
68	Ելգուջա, վէպ, թարգմ. Տ. Փիռումեանի. —	45
69	Չորրորդ մոգ, Վան-Դէյկի . . . . —	5
70	Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ —	50
71	Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ —	50
72	Զրոյցներ հովի մասին, Ս. Բալաղեանի . —	15
73	Ասդաբաշխութիւն Ֆլամմար., թ. Տ. Յ. 1 —	
74	Մանուկների հոգաւարութիւնը, Պոկրօվս- կիյ, թարգմ. բժ. Թ. Զ. . . . —	20
75	Մուկուչի հաւիկը, Պ. Նեղվանօվի. թ. Գ. Ա. —	15
76	Երկու հէքեաթ, Կարմէն Սիլ'վայի. թ. Ս. Մ. —	10
77	Կոմիկասի գերին, Լ. Տօլսովի. թ. Պ. Պ. Պ. —	20
78	Անձունի բատիկը, Անդէրսէնի թ. Պ. Պ. Ա. —	5
79	Վէսիկներ, Նիրվանզադէի . . . . —	40
80	Դարվինիզմ, Ս. Բալաղեանի . . . . —	40
81	Պետրոս Դուքիսի, <del>Անդրեասի</del> Անդրեասի . . . . —	50
82	Նիլիոնի կալանառը, Մօր. Հարտ. թ. Կ. Գ. —	60
83	Համելէտ Նէկսպիրի, թ. անդ. Յով. Խան Մ. —	75
84	Քննական պատմ. Հայոց մասն Ա. Ա. Մ. 1 —	
85	Նոյն, Մասն Բ. . . . . { Պարա- 1 —	
86	Նոյն, Մասն Գ. . . . . { մամուլի տակ { Պաշեա- —	
87	Նոյն, Մասն Գ. . . . . { " " " { նի —	
88	Պատմ. Հայոց, . . . . . { " " " { Ս. Պարա. —	
89	Ակնայ հնութիւններ, . . . . . { " " " { Յ. Ճանիկ. —	
90	Ուբինոսի մանուկը, Ույղի հէքիսթներից —	10